ԼՐՈՅ ԹԻՒ

ՄԵԾԻ ՏԷՐՈՒԹԵՒՆ ՕՍՄԱՆԵՒՆ

ԸՍՏԱՆԱՒՈՐ ՏՊԱԳՐՈՒԹԵՒՆ — ՆՈՒՄԷՐ 25

ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1832 ՄԱՅԻՍԻ 9։ ՈՐ Է ՌԷՎ ՋԻԼՀԻՃՃԷԻ 11

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ։

ԳՈՐԾՈՒՔ ՆԵՐՔԻՆ

Ինչպէս քանիցս անգամ տրպւած լրոյ գրերուն մէջը յիշւած է։ Էգիպոսոսի նախկին բդեշխ Մուհամմէտ ալի փաշայ ըսւած ապերախտը՝ մեծի տերութիւնէ և հզօր Բրբային հովանաւորութիւնը արժանի եղած այսքան շնորհաց և անհամար բարեաց երախտիքը չբգիտնալով, ժամանակէմը Ի վեր յանդգնութիւն ըրած կերպ կերպ գործքերը, և իր չար սրտին նկարւածքէն յայտնած գոյն զանոյն խաբէական ապստամբութիւնները՝ Թէև Ինքնակալը խմացաւ, բայց նոյն նախկին փաշային՝ առջին ժամանակներուն մէջը Բրբային հզօր կարողութիւնը ցոյց տրւած մեկ քանի ծառայութիւններուն համար՝ իսկոյն պատիժը տալ զանց ըրաւ։

Եւ այս ծառայութիւններուն խիստ մեծը՝ մեծաղօր տերութիւն կողմը իբր երախտանք ըրած (խմթինանի) պէս համարած՝ Ալ Հսապիին վրդովումն է, որ վերցրվեցաւ։ Թէպէտ այն գործքին արտաքուստ նայվելով, Մուհամմէտ ալի փաշային իր ջանքովը մեծատիտ տերութիւնը մեկ երևելի գործքին ըրած կերևի։ սակայն նեղքին անոր բոլոր մտաց դիտաւորութիւնը իր իշխանութիւնը մեծցընել, մանաւանդ լայնատարածակ Բրապիստանի գաւառին վրայ առանց հոգնելու իշխանութիւն բանեցընելու հետևիլը, Ճշմարտախօս և խելացի մարդիկ յայտնի կընեն։

Ինչ և իցէ, բարերար Թագաւորին աշխարհիս յայտնրւած գթութիւնը և խնամքին հարկադրութիւնէն, յիշեալ նախկին փաշային ծերութիւնը ողորմելով, և անոր պատճառովը հետևելու անհանգստութիւն հասարակութիւնը պահպանելով, և գուցէ իր անկարգ գործքերէն՝ խելքը գլուխը բերելով եթա մնալուն՝ և մեղայ գոչելուն յուսովը, որքան կակղութիւն և քաղցրութիւն ցոյց տրրվեցաւ, այնքան ապստամբութիւնը աւելի ըրաւ։

Բայց հետև դատաստանական պատժոյ վճիռը իր վրայ հրավերած է։ և բարձրը տերութիւն կողմանէ ալ ասկէց յառաջ եղած նախապատրաստութիւններուն գործադրվելը սկսելը հարկաւոր եղած է։

Ալ՝ ասն որոյ նախ և յառաջ Մուհամմէտ ալի փաշային յանձնրված Էգիպտոսի և Կիրիսի նահանգները որ անոնց յարգը և պատիվը չբգիտցաւ, և իր տղին Իսպ-

ժբ

ռահիմ փաշայ ըսված անիրաւին յանձնը-
ված Հապէշի նահանգը, երկուքին ալ
վրայէն առնվելով, Աստուծոյ կողմին
ընդհանուր հրամանատար մեծարու Հիւ-
սէյին փաշային արժանաւորութիւնը՝ մեծի
տէրութէն շնորհեցաւ. և այս վեցհիճէին
2 ին՝ հինգշաբթի օրը անոր խափուքէհ-
եասին խիլաթ հագաւ։

Եւ յաղողութիւնը բարձրելոյն արքայական
կառաբելադործած նաւատորմիղը (ռօնան
ման) ալ դուրս ելաւ. և այժմեան, և նա-
խորդ, և նախկին դենպեռներուն (շէյխա
լամներուն), և դաղէսքէրներուն, և օրէ-
նըսգէռներուն (իւլամներուն) կողմանէ
տրված՝ ստորագրեալ և կնքեալ վճիռնե-
րուն հարկադրութիւնը, թէ նախկին Եգիպ
տոսի բդեշխ Մուհամմէտ ալիին՝ և թէ
իր տղին՝ դատաստանական վճռով պատիժ
ներն տրվելու պատվերները ծանուցանող
արքունի հրովարտակները, Աստուծոյ ը
հանուր հրամանատարին, և Բրպիստանի
պաշտօնատար եղող բոլոր բդեշխներուն,
և ֆէրիքներուն, և իշխանաց իշխաննե-
րուն, և գաւառապետներուն, և ուրիշ
հարկաւոր եղողներուն, և բոլոր կղզինե-
րուն և ծովեղերեայ կողմերը խրկվեցաւ.
և բոլոր բարեկամ տէրութեց դեսպաննե-
րուն ալ զատ զատ սովորական յայտարա-
րութիւններուն պէս գրեր տրվեցաւ։

Եւ ահա ստորագրեալ վճիռներուն,
և Աստուծոյ ընդհանուր հրամանատարին
խրկված հրովարտակին, և դեսպաննե-
րուն տրված գրին՝ մեկ մեկ օրինակները
այս տեղը տրվեցաւ։

ՕՐԻՆԱԿ ՀՐՈՎԱՐՏԱԿԻՆ։

Իրմէն գաւառին այժմեան իշխե-
ցող, և յատկապէս մեծափառ Ինքնակա-
լութեան կողմանէ կատարեալ իշխանութիւն
Աստուծոյ կողմին ընդհանուր հրամանա-
տար, և հետզ գտնվելու ազգութեան և մեն
ուրբ զօրքերուս քաջայաղթ սպարապետ,
և այս անգամ Եգիպտոսի, և Կիլիսի, և
Հապէշի նահանգները, բոլոր շրջակայ
գաւառներովը՝ քո արժանաւորութեանդ
յանձնվելով շնորհեցաւ, մեծարու բը-
դեշխ Հիւսէյին փաշայ՝ ած զքեզ միշտ
մեծութեան մէջ պահէ, և կարողութիւդ և յա-
ռաջադիմութիւդ երկնապատիկ ամրացընէ։

* Որ Աստուծոյ ընդհանուր
հրամանատար և քաջայաղթ սպարապետ
ես, ահա Եգիպտոսի բդեշխ Մուհամ-
մէտ ալի փաշային ինչպէս որ ամենուն յայտ
նի է, ինքը հասարակ մարդկանց մեկը ե-
ղած ժամանակը՝ Եգիպտոսի նահանգին
պէս ընդարձակ երկրի բդեշխութեանը
արժանացաւ. և հետզհետէ ալ տէրութեան
կողմանէ ըրած խնդրվածքներուն շատին
թոյլտրվելի ընելով, մեծափառ տէրութեան
հովանաւորութեան նեղքեր օրը օրէ հարըս-
տանալով՝ անհամար բարութիւնքս լեցվեցաւ։

Երբոր անոր վրայ արքայական շնորհս
և ողորմութիւնս շատցաւ, ինքալ որ պէտք
էր ծառայական պարտաւորութեան մէջը ջան-
քը ավելցնել. ասոր հակառակ՝ հպարտութիւ-
և ամբարտաւանութիւն իր չար բնութիւնը հար-
կադրութենէն ապերախտութեան հետևելով,
մեծազօր իշխանութեան անզգամութի ընելը՝
և իր չար մտքին խորհուրդները կատարե-
լու հետևիլը՝ յառաջմանէ գիտցված է։

Որև անցեալ տարի Ի շիհանտացի Մուս
տաֆա փաշային դրդելով, Ալանիեայու
(Ռնավուտլուղին), և Բուսիլին մէջ
խռովութիւն հանելու ջանք ըրած, և
Եգիպտոս գացող Խրացի ճէլալ պէ-
կին և նախկին թիւթիւն կեօմրիւկի էմի-
նի՝ Զավալացի Մուստաֆային, ասոնց
մէջնորդութիւնը վերոյիշեալ փաշային՝ ըստ-
կով և զօրքով և պատերազմական պիտոյ-
քով և զահրեով օգնութի ընելու խօստ-
մունքներու հետզհետէ խրկած թղթերը
որ հիմա ձեռք անցաւ, անոնցմէ յայտ-
նվեցաւ։

Եւ վերոյիշեալ փաշային ալ՝ Մուհամ-
մէտ ալի փաշայ անիրաւին հայհոյելով, և
անէծք կարդալով, թէև ստոյգը պատմեց,
կրկին ջրգիտնալու բերելով զանց եղած
էր։ Եւ ասկէ՛ի զատ որովհետև այն չար
և ապերախտը սատանայի պէս ամենին մարդ

ճանապարհէ հանելը և դրդելը իրէն սովորութիւն ըրած է։

Ինոր համար ժամանակէմէ 'ի վեր Սայտայու բդեշխ Իպտուլլահ փաշային ալ թէև քանիցս անգամ յորդորանք ըրած է որ իր վատ և անկարգ ճանապարհին հետևի. բայց ան ալ իր բարերար Թագաւորին հաւատարմութեամբ պահելով, անոր դիվական խաբէութիւնը չէ հետևեր. անոր համար հետը թշնամի և տեղուէ ըրեր է։ Ս երջապես իր անիրաւ տղին Իպրահիմ փաշային հետը՝ ցամաքէն և ծովէն Սայտայու կողմերը զօրքեր և նաւեր ուղարկելով ընդդեմ հրամանիս և հակառակ դատաստանական իրաւանց՝ Թագաւորական պաշտպանեալ բերդերէս՝ Լաֆիայու բերդը և Շամդարապուլուսի նահանգը ապստամբութիւնի տիրեր է. և հիմա Լիբեայու բերդն ալ սաստիկ պաշարել և նեղել յանդգներ է։

Եւ այսպիսի ապստամբական ըրած գործքերուն համար, իրէն դատաստանական պատիժ տալը՝ թէպէտ հարկ եղած էր. բայց նախ և յառաջ ատանկ պատիժ տալու վերաբերեալ գործքերու ձեռնամուխ չըլլալով, բոլորին վրայ ունեցած արքայական գթութիւնս և ողորմութիւնս հարկադրութիւնը՝ զինքը այժմեան և ապագայ խայտառակութիւն և անարգութիւն պաշտպանելու համար, նաև ինքնակալութիւնս յոյ կողմանէ ավանդի (էմանէթի) պէս յանձնված աղքատները և տկարները և կարօտները և բայեանները մէջ տեղը մնաս կրելէն պահպանելու մտօք, զինքը զգուշացնելու և արթնցնելու կերպով կրկին անգամ իրէն պատուիրանաց նամակներ խրկված է։

Եւ յետոյ հոգը տերութիւնս կողմանէ յատկապէս պաշտօնատար ալ խրկելով, և դատաստանական իրաւանց կողմանէ ալ՝ այդ ըրած գործդ ապստամբութիւն է և այդ գործքէն ձեռք չքաշեանէ, իրաւացի պատժոյ արժանի կըլլաս ըսելով, պէտք եղած խրատները թէպէտ իրէն խմացուցի տրված էր. սակայն ամենևին ոչ դատաստանական խրատները, և ոչ թագաւորական պատվերները անոր ականջը մրատաւ. միայն իր անկարգ և անօգուտ յամառութիւնը մէջը անխախտ մնալով, բացէ 'ի բաց անհնազանդ և ապստամբ եղաւ. և իր բարերար թագաւորին դէմ պատերազմողներուն յանցանքովը՝ ինք ալ յանցաւոր գրանցվեցաւ։

Եւ ահա այս գործքերուն պատճառով այս բարեշնչան տարիս հաճիները քիապէէն զուրկ մնացին. և ասով Ս՝ուհամնէտ ալի փաշային՝ կրօնքի հակառակ ըլլալը կրկնապատիկ յայտնվեցաւ. և կրօնքիս և մեծի տերութիւնս մնաս տալու դիտաւորութիւնը արդեակ պէս յայտնի եղաւ. և ամենևին կարծիք չըմնալուն պատճառովը, դատաստանական իրաւանց վճռոյն հարցանել հարկաւորեցաւ։

—

Հարցումն։ Երկնակի աղագաւ՝ (այս անուն մարդը) և (այն ոք մարդը), որ ընդհանուր հրամանատան և Ս՝էքքէի և Ս՝էտինէի պաշտօնեայ Թագաւորի կողմանէ որոյ Թագաւորուն մինչև 'ի կատարած աշխարհի տևեսցէ, զատ զատ մեկ մեկ նահանգի պահպանութիւնը համար՝ հաւատարիմութիւնը բդեշխս կարգած էին։ Հիմա (այս անուն մարդը) հնազանդութիւն դուրս եկաւ, և տաճիկները ջարդելու դիտաւորութիւնը (այն ոք մարդուն) տերութիւն կողմանէ նշանած բերդին վրայ զօրք և իր մարդիկները ուղարկելով պաշարելու և պատերազմելու հետևեցաւ։ Եւ ասոր բացէ 'ի բաց ապստամբիլը՝ և (այն ոք մարդուն) կողմանէ օգնութի խնդրվելը՝ Ինքնակալը լսելով, խաղաղեցնելու և ինքը վերցնելու մտօք՝ (այս անուն մարդուն) հետ զհետէ խրատական թղթեր խրկվելով՝ պատվերը տրվեցաւ։ Սակայն նա ոչ խրատի, և ոչ պատվերի ականջ դրաւ. և իր ապստամբութիւնը մէջ անխախտ կենալէն 'ի զատ, թագաւորական բերդերէն մեկ քանի բերդին իր մարդիկներովը տիրեց. և Թագաւորին կողմանէ ալ այն բերդերուն խրկված (այն ոք բդեշխին) դէմ կենալով, և ներս չընթողելով պատերազմեցաւ. և ասոր ասանկ արգելումը և ապստամբութիւնը յայտնվեցաւ։ Հիմա ասոր ապստամբութիւնը վերցնելու համար՝ հետը պատերազմելէն 'ի

զատ՝ եթէ ուրիշ հնար չգտնուվի, արդեօք բաղմուելը մինչև ցըրվի, (այս անուն մարդը) և իր մարդիկները սպանելը՝ դատաստան արժան է։

Պապափանի։ Պատամբ են, Թագաւորին և իր բոլոր ժողովրդոցը վրայ սպանելը հարկ է։

Որովհետև այսպէս է, իրենց կամքը (այս անուն մարդուն) ապստամբութիւնը հետևելով պատերազմ խնդրողներն ալ, որ իսկ և իսկ ապստամբ կըհամարվին, և այնպիսի ապստամբներուն Թուր քաշելը արժան չէ ըսողներն ալ՝ որ այս խօսքով իրենց կրօնքը ուրացած կըլլան, հիմա այս երկու տեսակ ժողովուրդն ալ սպաննելը արդեօք իրաւունք է։

Պապափանի։ Այո՛ իրաւունք է։

Որովհետև այսպէս է, անոնցմէ հետևելու վնասը վերցընելու դիտաւորութիւն հետերնին պատերազմելու համար՝ Թագաւորին հրաման ըրած մարդիկները, այն տրըված արքայական հրամանին հնազանդելու արդեօք օրինաւոր պարտաւոր են։

Պապափանի։ Այո՛ պարտաւոր են։

Որովհետև այսպէս է, Արքային խըրկած զօրքերը՝ ապստամբներուն հետը պատերազմելու առենը՝ ապստամբները մեռցնողները արդեօք ղաղի կըկոչվին. և ապստամբներուն ձեռամբը՝ Արքային զօրքերուն մեռած գտնվողները՝ արդեօք չեհիտ կըկոչվին։

Պապափանի։ Այո՛ կըկոչվին։

—

Եւ այս վերոյիշեալ դատաստանական խրատոց վճիռները՝ այժմեան դենպետ Էսկենտի պատէ սեյիտ Ապտիւլ վէհապ էֆէնտիին կողմանէ՝ բոլոր գաղէպբէներուն և օրէնսգէտներուն ստորագրութիւնը տրըվեցաւ։

—

Ասոնք մինչև հիմա տառկաց հանգըստութիւնը չավարվելու և աղքատները նեղու թիւն չըկրելու մտոք՝ Մուհամմէտ ալիին կերպ կերպ ինասակար գործքերուն թէև համբերելով զանց եղած է. այսուհետև անոր ոչընչանալը հարկաւոր ըլլալուն համար, վրայն երթալիքը դատաստանին հարկադրութիւնն է, թագաւորական պարտքս ըլլալով, թէ անոր զաւակներէն, և թէ ընտանիքներէն, և թէ անոր նեղքէը գըտնվողներէն, և թէ մերձաւորներէն, և թէ զօրքերէն, որ ապստամբական գործքերու հաղորդ չեն եղեր, թէպէտ անոր հետը գըտնված են, և մեծի տերութեան կապաւինին. այնպիսիներուն Թագաւորական գթութեան դուռը բաց է։ Այսպէս յիշեալ երկու ապստամբները և իրենց հետը գըտնվող հանմախոհները պատժելով, անոնց ձեռաց տակը զբաղվված և նկուն ինկած քաղաքացիք և աղքատ բոյներն ալ՝ անոնց վնասներէն և զրկանքէն ազատելով, ամենայն բաղմագութ Թագաւորական հովանաւորութեան հանգիստ և խաղաղ ապրելնուն համար, այս կերպով արքայական հրամանագիրս տրըված է։ Եւ անոնց յանձնըված Աղիպտոսի և Կիլիքիի և Հապէշնահանգները բոլոր շրջակայ տեղերովը՝ իմ արքայական գթութեան ունեցած իշխանութեդ կցորդելով, քո արժանաւորութեդ յանձնըվելով՝ շնորհեցաւ։

Ուստի այն ապերախտը և թէ անոր տղան Խուրշիտ փաշայ ըսված չարը՝ որ իրենց ոսկրներուն մէջը եղած հացիս ուրացող գտնվելով, ասանկ ապստամբութեան յանցանաց նեղքէը ինկած են. և իրենց ազատուելու ապահով ճանապարհը դառնալու հրավերելուն՝ ի զատ, ուրիշ դիտաւորութիւնը չըկար։ Սակայն անոնք միայն իրենց չարութիւնը գործ դնելու մտոք պատերազմելու հետևելով, այսքան տառկաց ալ առանց հարկաւորութեան սպաննվելնուն, և հաճիները Արեւելք գնալու չըկարողանալնուն պատճառ եղան. անոր համար կամքն ասուծոյ՝ իրենց ըրած յանդգնական չար գործքերուն պատիժը այս մեր օրերս գտնալնին ասուծմէ կըյուսացվի և կըխընդրվի։

Այս քեզ տեսնամ, հաւատարմութեդ և պաշտօնիդ հարկադրութենէն՝ յաջողութեամենակալին՝ արքունական բանակիս հետ մեկ ժամ յառաջ Հալեպ երթաս. և անկէ ալ ամենայն հարկաւոր կատարելութեամբ շնորհակ

զեպ'ի յԱրգիպտոս երթաս • և նոյ ողորմութիւնը յիշեալ ապստամբներուն վրայինն դի մելով բռնես և պատժես • և Արգիպտոսի երկրին տիրելով, Աբրահիստանի սահմանը ապստամբներուն ձեռքէն ազատելու բոլոր կարողութիւդ ջանք ընես և աշխատիս • և անոնց զաւակներէն, և ընտանիքներէն և զօրքերէն, և մերձաւորներէն որ ակամայ անոնց հետևերէն, և ապստամբական և չարութիւն գործքերու հաղորդ չեն եղեր • այնպիսիները երբ որ մեծախառ տէրութեան ապաւինելու ըլլան, անոնց ամենեւին ժամանակը բան չըսելէն 'ի զատ, ամէն կերպով անոնց վրայ իմ թագաւորական շնորհքս և գթութիս չընայելով, անոնց բոլոր ապրանքին և անձերնուն չըմօտենալու համար՝ հրաման ըրի, որ ջանք ընես :

Ուստի ահա քեզի գիտցնելով և պատուիրելով և կրկնակի քո պաշտօնատարութիւդ իմացընելով, յատկապէս այս մեծազօր հրամանս գրելով, արքայական շնորհումս բարձր հրամաններուս հետը մեկտեղ ծալելով (այս անուն անէջին) հետը խրկեցաւ :

Ազա որպիսութիւնը քո խոհեմութիւդ յայտ եղած ժամանակը, վերոյիշեալ կերպովը շարժելով հարկաւոր եղած բաները շուտով կատարելու հետևիս • և այն կերպով քեզնէ արքայական կողմանէս սպասեալ լաւ ծառայութիւնները և հաճելի գործքերը յառաջ բերելով ցոյց տաս :

1247 ՀԵԼԷՊՈՒԷ ՎԷՐՋ :

Արքունի հրամանագրին մէջ գրված վէճերը սպասող ամպորդերաշ երեւելի օրէնագէտներուն անունները այս պէտք յապաւ յապաւ պրպտեցաւ :

—

1 Նախկին գենպեա՝ մեքքի զատ՝ Մուստաֆա ասիմ էֆէնտին :

2 Նախկին գենպեա՝ սրտդի զատ՝ Ահմէտ ըէշիտ էֆէնտին :

3 Նախկին գենպեա՝ գաղը զատ՝ Մուհամմէտ Թահիր էֆէնտին :

4 Ռումելիի այժմեան գաղէսքեր՝ խալիլ հալիտ փաշայ զատ՝ Մուհամմէտ արիֆ էֆէնտին :

5 Ռումելիի նախկին գաղէսքեր՝ փերի զատի Թոռը Եահեա էֆէնտին :

6 Ռումելիի նախկին գաղէսքեր՝ և այժմեան արքունի բժշկապետ Մուստաֆա պէհչէթ էֆէնտի :

7 Ռումելիի նախկին գաղէսքեր՝ ապտուլլահ էֆէնտի զատ՝ սէյիտ Ահմէտ ըէշիտ էֆէնտին :

8 Ռումելիի նախկին գաղէսքեր՝ մուստաֆա փաշայ զատ՝ Մուհամմէտ Թահիր էֆէնտին :

9 Ռումելիի նախկին գաղէսքեր՝ արապզատէ Մուհամմէտ սաատուլլահ էֆէնտին :

10 Անատօլուի նախկին գաղէսքեր՝ ալի փաշայի Թոռը սէյիտ Ալի ըիզա էֆէնտին :

11 Անատօլուի նախկին գաղէսքեր՝ մէլէք փաշայ զատ՝ Ապտիւլգատիր էֆէնտին :

12 Անատօլուի նախկին գաղէսքեր՝ արապզատէ Մուհամմէտ համտուլլահ էֆէնտին :

13 Անատօլուի նախկին գաղէսքեր՝ մէշրէպ զատ՝ Ապտիւրրահման էֆէնտին :

14 Անատօլուի նախկին գաղէսքեր՝ եահեա զատ՝ Մուհամմէտ ռայիս էֆէնտին :

15 Անատօլուի այժմեան գաղէսքեր՝ և առաջին իմամ աքքայլին՝ սէյիտ հաճի Մուհամմէտ զէյնէլ ապիտին էֆէնտին :

16 Անատօլուի նախկին գաղէսքեր՝ էմին պէկ զատ՝ Ապտիւլգատիր էֆէնտին :

17 Անատօլուի նախկին գաղէսքեր՝ իւսուֆ փաշայ զատ՝ Մուհամմէտ նաղիֆ էֆէնտին :

18 Նագիպի եշրէֆ իսմէթ պէկ զատ՝ Ահմէտ արիֆ էֆէնտին :

19 Ըսթանպօլու նախկին գաւը՝ սելիմ մօլլա զատ՝ սէյիտ Ապտիւրրահիմ էֆէնտին :

20 Ըսթանպօլու այժմեան գաւը՝ Մուհամմէտ սէրվէթ էֆէնտին :

21 Մէքքէի նախկին գաւը՝ և այժմեան ֆէթվա էմինի՝ քէտուսցի սէյիտ հաֆըզ Մուհամմէտ էֆէնտին :

22 Մէքքէի նախկին գաւը՝ և այժմեան Թագվէմի վագայէի նազը՝ սահհաֆլէր շէյխի զատ՝ սէյիտ Մուհամմէտ էսատ էֆէնտին :

23 Մէքքէի նախկին գաւը՝ չէրքէշցի Մուհամմէտ էֆէնտին :

24 Մէքքէի նախկին գաւը՝ և այժմեան էվգաֆ միւֆէթթիշի՝ քէօթահէացի զատ՝ սէյիտ Մուհամմէտ արիֆ էֆէնտին :

25 Մէքքէի նախկին գաւը՝ տարէնտէլի զատ՝ Մուստաֆա լիզզէթ էֆէնտին :

26 Մէքքէի նախկին գաւը՝ և այժմ շէրիֆի վագայէ քէտգիսի՝ նասուհի զատի Թոռը սէյիտ Իպրահիմ լիֆիֆէթ էֆէնտին :

27 Մէքքէի նախկին գաւը՝ գաստամոնցի Էօմէր էֆէնտին :

28 Մէքքէի նախկին գաւը՝ ֆընտըք զատէն Թոռը սէյիտ Իպրահիմ էֆէնտին :

29 Աքքունի պալատին գրագատանը խոճա՝ և բենպեսին փոխանորդ գաստատու՝ ագշէհիրցի Էօմէր էֆէնտին :

30 Թագաւորական քաղաքի միւտերրիսներին աքքունի պալատին խոճա՝ սէյիտ Հիւսէյնն է" :

31 Թագաւորեալ քաղաքի միւտերրիսներէն՝ զալաթայու ալքունի պալատին խօճա՝ ախըսղայի Ահմէտ էֆէնտին։

32 Թագաւորեալ քաղաքի միւտերրիսներէն՝ զալաթայու ալքունի պալատին խօճա՝ և ալքունի էվգաֆի միւֆէթթիշ՝ իմամ զատէ Մուհամմէտ էֆէնտին։

33 Թագաւորեալ քաղաքի միւտերրիսներէն՝ ալքունի պալատին խօճա՝ ակնցի Իպրահիմ էֆ"։

34 Թագաւորեալ քաղաքի միւտերրիսներէն՝ ալքունի պալատին խօճա՝ տէնիզլիի Եահէա է"։

35 Միւտերրիս քիւրու Ապուլբրահման է"։

36 Թագաւորեալ քաղաքի միւտերրիսներէն՝ զալաթայու ալքունի պալատին խօճա՝ պապաղալէլի Մուստաֆա էֆէնտին։

37 Թագաւորեալ քաղաքի միւտերրիսներէն՝ զալաթայու ալքունի պալատին խօճա՝ մանաստրըցի Մուհամմէտ էմին էֆէնտին։

38 Մեծ այասօֆեայի վէզարանքին քարոզող՝ հաճի Եուսուֆ էֆէնտին։

39 Սուլթան ահմէտի վէզարանքին քարոզող՝ և էյուպի վէզարանքին առաջին իմամ՝ հաճի հաֆըզ Ապտուլլահ էֆէնտին։

Օրինակ սովորական յայտարարութեան։

Աղիպտոսի նախկին բդեշխ Մուհամմէտ ալի փաշայն յառաջմանէ հաստատակ մարդկանց մէկը ըլլալով, Աղիպտոսի նահանգին պէս մեկ ընդարձակ երկրիմը արժանացաւ։ և հետզհետէ ալ մեծազօր տէրութեան կողմանէ ոլքան խնդրվածքներ ըրաւ, թագաւորական գթութիւն շատին թոյլտրվութիւն եղաւ։

Թէև սկիզբները վերհատաւ տէրութիւն հովանաւորութիւնը և զօրութիւնը մեկ քանի ծառայութիւններու մէջ գտնվելէ է, անոնց փոխարէն մինչև հիմա մեծազօր թագաւորութիւն կողմանէ իրէն կրկնապատիկ և կերպ կերպ մեծ վարձատրութիւններ տրվելով, զանազան և մեծամեծ արքայական շնորհաց և պարգևներու հասած է։ և այսքան բարիքներուն արժանաւորութիւնը ճանաչել և շնորհակալ ըլլալը մեկդի մնայ։ որպէս թէ իր ծառայութիւն մէջը գրանրված պաշտօնները ոչ թէ արքայական հովանաւորութիւնը և զօրութիւնը, այլ բոլորովին իր կարողութիւնը յառաջ տարած գիտնալով, ընդդէմ ծառայական կանոնի մեծազօր թագաւորութիւն կողմը ատեն ատեն երախտանք ըրածի պէս գործքերը ցոյց տալէն 'ի զատ, իր կարծիքովը ըրած ծառայութիւններուն յետոյ՝ մեկ քանի տեղվանք ալ իր իշխանութիւն նեղքերը առնելու խսկոյն խնդրվածքներ կընէր։

Եւ ասանկ անվայել գործքերը ոլքան որ պաշտօնատարութիւն եղանակի և տէրութիւն կանոններուն ընդդէմ և հակառակ թէև եղած էր։ միայն քարձր տէրութիւն բարեգթութիւնը մանաւանդ մինչև հիմա ինքնակալին գթած և ողորմած բնութիւնը որ աշխարհիս յայտնված է, վերհատաւին նոյն գթութիւնը հարկադրութիւն՝ այն կերպ խնդրվածքներուն շատը սկիզբները ըրած մեկ քանի ծառայութիւնը համար՝ ոլքան հրաման և թոյլտրվութիւն կըլլար, մեկ ժամանակմը ծառայէն ձև թէպէտ ցոյց կուտար։ բայց յետոյ խնդրվածքներուն մէջէն մեկ բանաւոր պատճառովմը եթէ մեկ քանին եաճար, հաւատարմութիւն և հնազանդութիւն կերպէն հեռանալով, նեղացածի պէս ձևմը ցոյց կուտար։ և մեծազօր տէրութիւնը պատահեալ գործքերուն կատարելու ծառայութիւն չբվայելելու կերպով, զանազան անկարգ և անվայելուչ շարժմունքներէն չէր դադարեր։

Եւ 'ի վերայ այսր ամի՝ մեծափառ տէրութիւն կողմանէ ամէն ժամանակ թոյլտրվութիւն և գթութիւն եղեր էր և կըլլար։ բայց երբոր վերըսանին խելքէ դուրս շարժմունքէն և անկարծելի նենգամիտ գործքերէն ըլլալով, անցեալ տարի Իշխանարացի Մուստաֆա փաշայն դրդելով և ոտք հանելով, Ռընավուտլուխին և Իսմայիլին խառնակութիւնը և վրդովմանը ջնջք ըրաւ։

Եւ յԱղիպտոս գացող Օխրացի Շէխալ պէկին, և նախկին Թիւթիւն կէօմրիւկի էմինի Պավալացի Մուստաֆային՝ որոնց միջնորդութիւնը, վերոյիշեալ փաշային ըստակով և զօրքով և պատերազմական պիտոյքով և զահրէով օգնութիւն ընելու խոստմունքներու հետզհետէ խրբկած թղթերը որ հիմա ձեռք անցաւ, անոնցմէ յայտնըվեցաւ։

Եւ յիշեալ Պուստաֆա փաշային ալ Պուհամմէտ ալի փաշայ անիրաւին հայհոյելով և անէծք կարդալով թէև ստոյգը պատմեց, սակայն վերատին չգիտնալու զարնելով զանց եղած էր։ Եւ ասկէ 'ի զատ՝ որովհետև այն չարը և ապերախտը սատանայի պէս ամէն մարդ ճանապարհէ հանելը. և դրդելը իրէն սովորութիւն ըրած է. անոր համար ժամանակէմը 'ի վեր Այտայու բդեշխ Պզտուլլահ փաշային ալ թէև քանիցս անգամ յորդորանք ըրած է, որ իր վատ և անկարգ ճանապարհին հետևի. բայց անալ մեծի տերութիւնը հաւատարիմ ըլալով, անոր դիվական խաբէութեանը չէ հետևեր։ Ուստի հետը թշնամութիւն ընելով, մեկ քանի վաճառականի վերաբերեալ գործքերը՝ կամ անոր նման փոքր ինչ պատճառները մէջ բերելով, առանց տերութիւնէ հրամանի և կամեցողութեան պատերազմելու հետևեր է. և անեղկիւղ ինք իր գլխուն Պ.քեայու վրայ ծովէն և ցամաքէն զօրքեր և նաւեր խրկելով, արքայական բերդը լրջաբար պաշարելու և նեղելու յանդգնութիւն ըրած է։

Եւ ասոր այս անգամին ըրած շարժմունքը՝ խիստ անվայել և անկարգ գործք ըլլալուն համար, իր արտուղի ճանապարհէն դարձնելու վերաբերեալ թղթատական գրեր ելբղկրվեցաւ։ Եւ յետոյ մեծի տերութիւնէ կոչմանէ յատկապէս պաշտօնատար ալ խրատ տալու և արթնցնելու համար թէև խրկրվեցաւ. բայց նա ամենևին խրատ չընդունելով, իր չար կամացը վրայ անխախտ կեցաւ, և իր յանդգնութիւն ըրած անկարգ գործքէն ետ չդարձաւ։

Յիրաւի արտաքուստ ասոր այս շարժմունքը որպէս թէ միայն Այտայու բդեշխին հետը կռիւ ունենալը կը յայտնէր. բայց յիրաւի ինքը բնական անյագ ծերագահմը ըլալուն համար, իր խաբէական բնութիւնը մէջ ունեցած ապերախտութիւնը և չարմանին դիտաւորութիւնը՝ մեկ քանի տեղեր ալ իր իշխանութիւնէ նեղքիւ առնելու պարապ մտքեր ունենալը՝ յառաջմանէ և այժմեան շարժմունքներէն յայտնի ըլլալէն 'ի զատ, Շամ դարապուլուսի և Այտայու նահանգները սուտ և շինծու գրութիւնք խնդրելն ալ՝ ամէնն մարդու կարծիքը հաստատեց։

Ուստի անոր վերատակար կամքը բոլորովին իմացվելով, ամէնն կերպով մեծի տերութիւնէ նախապատրաստ գտնվելը՝ և Պ.քեայու թագաւորական բերդը զուրկ տեղը նեղելէն և վնասելէն ազատելու ջանք՝ արքայական պարտք ըլլալով, պէտք եղած պատրաստութիւնները ծովէն և ցամաքէն 'ի գործ դրված է. և յաջողութեան այ Պնատոլուի կողմին ընդհանուր հրամանատարութիւնով այս բանիս համար յատկապէս պաշտօնատար ալ ընտրված խրկված է։

Սակայն այսքան դատաստանական խրատները և արքայական պատվերները, կատաղի ձիու նման՝ անոր բնութիւնը ամենևին չը թափանցելով, այժմ իր գիտցածէն և յանդգնաբար ըրած անկարգ գործքերէն ետ չդարձաւ. և այս անգամալ բոլորովին իր շարունակ չարութիւնը յայտնելով, Եգիպտոսի մէջը եղած մեծի տերութիւնէ պաշտօնատարը՝ սուտ և շինծու պատասխաններով ետ դարձուցեր է։

Եւ Օսման փաշայն որ Պ.ըքային կողմանէ՝ Շամ դարապուլուսի իշխանաց իշխանի հրամանատարութիւնէ գացած էր, Դարապուլուսի կողմը եղող Եգիպտոսի իր վատ զօրքերը, յիշեալ փաշային պաշտօնատարութիւնէ տեղը նստելու չը թողելու մտօք՝ պատերազմելու հետևցուցեր է. և տերութիւնէ կողմանէ՝ այն տեղերը խրկրված զահրեի նավերուն տիրելու յանդգներ է։

Վերջապէս՝ իր բարերարը եղող հրամանատարը բացէ՛ի բաց ապստամբ եղած է. ի՛՝ միայն ասոր կռիւը Այտայու բդեշխին հետը չէ. հապա իր դիտաւորութիւնը՝ իշխանութիւնը մեծցընելու և երկիր տիրելու համար է. և ասանկ մտոքի կամք ունենալը, վերոյիշեալ Դարապուլուսի իշխանաց իշխանին պաշտօնատարութիւնէ տեղը մնալը չը թողուցալէն, և Դարապուլուսի բերդը չը ձեռնգելու համար, պատերազմելու հետևելէն՝ խակ խակ ստուգվեցաւ։

Եւ այս հաստատուն ապացոյցին, և յայտնի օրինակին հարկաւորութիւնը, սկզբ-

բանէ անոի սրտին մէջը ունեցած չար կամ-
քը՝ Ս. քէայու բերդը պաշարելէն յետոյ,
յանդգնաբար իրէն աչք տընկած Շ ամ-
քաղաքը, և Շ ամին ծովեզերեայ ցամաքը
իր կարգելքովը տիրելու պէս, մնոտի երևա-
կայու